նակ ընկած քարերից յարմարեցրել են կամ նոր գրել եւ լրացրել վնասուածները:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 100.
Բ. Գիրք եր. 69. պատկ. 139.

ԳԵՂԱՐԴ

Արեւելեան պատին՝ դրսից. նախընթացի տակը եւ տարբեր գրով:

1. Կամաւն Այ ես... Նիկս: Ի: դահեկան
   եառ ի խորանս եւ սպասաւորք սորա
   խոստացան ի տարին: Ա: աւր ժամ:
2. Որպէս անմիջական շարունակութիւն
   Գ աւր ժամ: Բ: Բեքային: Ա: կանցն ? որ
   :Հ: դահեկան եառ ի սրքս... (մնացածից
   միտք չի դուրս գալիս):

ԾԱՆՕԹ.— Այս երկու արձանագրութիւնները, որոնց տակն է եւ Գրիգոր Խաչենեցու արձանագրութեան սկիզբը, «Ես Գրիգոր Խաչենեցի...» համարում ենք չինութեան ժամանակից: Երկրորդ արձանագրութիւնը փչացած հաւանաբար երկրաշարժի ժամանակ. երկրորդ տողի «Գ»-ը թիւ չէ: Գրիգոր Խաչենեցին նոյն պէտք է լինի Տղայ Գրիգորի հետ (Ցաւել. Ա. 79. Բ. Գիրք. եր. 62.):

Մխիթ. Սա. 18.

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 101.
Բ. Գիրք. 56.

ԳԵՂԱՐԴ

Արեւելեան պատի խորշի վերին կողմը.

1. Ես Յակոբ աշակերտ Կոմ... (խասի ?)
   եառ: Կ: ?
2. դհ եւ խոստացան: Գ: աւր
3. ժամ: Ա: Յակոբա: Ա: Սիմէոնին
4. :Ա: Գբ կատարիչք
5. ահնին...

ԾԱՆՕԹ.— Ընդգծուածները մենք չենք կարդացել, լրացնում ենք Մխիթարեանից: Զորրորդ տողում անունը գրուած է կրճատ ձեւով «Գբ» (Գաբրիէլ?):

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 102.
Բ. Գիրք. 56.

ԳԵՂԱՐԴ

Արեւելեան պատին երկու խորշերի մէջ եղած տարածութեան վերայ:

ա.

1. Ես Հաղարդեղս եւ Կումիտաս....
2. ի սբ ուխտս: Կ: ? դահեկան եւ սպասաւ
3. որք սորա եառուն ի տա
4. րին: Գ: աւր ժամ
5. :Բ: աւրն մեզ: Ա: Ասլանին ի
6. տաւնի քառասնիցն որ խափանէ դատի ի
   Քէ

բ.

Սրան կցուած է.
Ա: աւր ժամ Գոհարին կատարիչք աւրհ
որ եառ...: Ի: դահեկան:

ԾԱՆՕԹ.— Մխիթ. Սա. 19. առաջին տողի վերջում կարդում է «տուաք», երկրորդում «:Կ:», որ ստուգել չկարողացանք փչացած լինելու պատճառով: Բայց պարզ սխալ է «ի տարին: է: (եօթ) աւր», պէտք է լինի «:Գ: աւր»:

Հաղարդեղի եւ Կումիտասի մի ուրիշ արձանագրութիւն տ. Ցաւել. Ա. 68. ԺԲ. դարու վերջերի եւ ԺԳ.ի սկզբի վանականներ են, ուրեմն եւ այս արձանագրութիւնները տաճարի չինութեան ժամանակներից:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 103.
Բ. Գիրք եր. 69.

ԳԵՂԱՐԴ

Նախընթացի տակը.

1. Ես Սարու եառ: Ի: դահեկան եւ
   սպասաւորքս խոստացան: Բ:
   աւր ժամ:
   Իբրեւ շարունակութիւն՝
2. Ես Ոսկի եառ: Ի: դահեկան եւ խոստա-
   ցան: Ա: աւր ժամ:
   Իբրեւ շարունակութիւն՝
3. Ես Հաւրքուրս եառ: Ի:
   դահեկան եւ խոստացան: Ա: աւր
   Աւելի ցած՝
4. Կամաւն Այ Ես Մանու
   չս միաբանեցայ սբ
   ուխտիս եառ: Ի: դհ
   եւ խոստացան: Ա: աւր ժամ
   Աւէտեացն Ճրագլու:

ԾԱՆՕԹ.— Զորրորդ արձանագրութեան մէջ Մխիթարեան եր. 20 ունի «Մանուչարս»:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա. 104.
Բ. Գիրք եր. 69.

ԳԵՂԱՐԴ

Արեւելեան պատի ներքեւի մասում, երկու խորշերի մէջ կան մի քանի արձանագրութիւն-